


Sulawesi Sulphur-crested



1927

17 FEB 2008

Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

Սոցիալական Դաստիարակության Գլխ. Վարչություն

№ 16 ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 16

38 Այ

-33 Բ. Ն. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ ՅԵԿ Ա. Ն. ԶՅՈՒԲԻՆՍԿԻՑ

# ՄԱՆՈՒԹԱԿԱՏՈՒՐԱ

Թարգմ. Հ. ՀՈՎ. Ա. Կ. Մ. Պ.

25 APR 2013

3424  
38



№ 599

Գրառեպիար № 313 (բ)

Տիրագ 3000

Գնումը առաջին տպարան Վաղարշապատում

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ՅԵՎ ՄԱՆՈՒ- ԹԱԿՏՈՒՐԱ.

Մանուֆակտուրան աշխատանքի բա-  
սուրա:

Ժանման վրա հիմնված կոռպերացիալի  
պարզ ձևն է: Արտադրության կապիտալիստական պրոցես-  
սի այս բնորոշ ձևն իշխում եր մանուֆակտուրային ժա-  
մանակաշրջանի աճբողջ ընթացքում, այսինքն մոտավորա-  
պես XVI դարի կեսից մինչև XVIII դարի վաթսունական  
թվականները:

Խնդիրն ե առա-  
ջանում մանու-  
թակտուրան: Ա-  
ռաջին գեղի:

Մանուֆակտուրան առաջանում ե յեր-  
շանում մանու-  
թակտուրան: Ա-  
ռաջին գեղի:

Կու կերպ: Առաջին դեպքում մի արհես-  
տանոցում միանույն կապիտալիստի դե-  
կավարության ներքո միանում են զանա-  
պան արհեստի տեր բանվորներ: Այդ արհեստանոցում տե-  
ղի լե ունենում արդասիքի (պրոդուկտ) մշակման աճբողջ  
պրոցեսում մինչև նրա վերջնական ափարտը: Այսպես, որի-  
նակ, կառեթը (ծածկած կառք) սկզբնական շրջանում բագ-  
մաթիվ անկախ, ինքնուրույն արհեստավորների միացյալ  
աշխատանքի արդասիք եր: Նրա վրա աշխատում են կառագործը, լծանարք շինողը, դերձակը, յերկաթագործը,  
պղնձագործը, հյուսնը, պաստառողը ապակի զցողը, ներ-  
կարարը, լաքողը, վոսկեգոծողը և այլն: Կառեթի մանու-  
ֆակտուրան միացնում ե այդ բոլոր տարբեր արհեստա-  
վորներին մի արհեստանոցում, ուր նրանք միասին կա-  
տարում են իրենց աշխատանքը: Իհարկե, կառեթը չի

կարելի վոսկեզոծել, մինչև վոր նա շինված պատրաստ չինիւ: Բայց յեթե միաժամանակ միքանի կառեթ ե շինվում, նրանց մի մասը կարելի յե հատկացնել վոսկեզոծելու հենց այն ժամանակ, յերբ մյուս մասը դեռ յենթակա յե արտադրության ավելի սկզբնական, այսինքն մինչև վոսկեզոծելը տեղի ունեցող պրոցեսսին: Այստեղ մենք տեսնում ենք դեռ պարզ կոռպերացիա: Բայց շուտով տեղի յե ունենում եցական փոփոխություն: Դերձակը, յերկաթագործը, պղնձագործը և ալյն, քանի վոր միայն կառեթի գործով են զբաղվում, հետզհետե կորցնում են ամբողջովին իրենց արհեստով զբաղվելու վարժությունը և դրանեա միասին նաև ընդունակությունը: Մյուս կողմից նրանց գործունելությունն այդ նեղ շրջանակում ավելի յե կատարելագործվում: Կառեթի մանուֆակտուրան սկզբնական շրջանում ներկայացնում ե ինքնուրուցն արհեստների համակցութիւն (կոմբինացիա): Փոքր առ փոքր կառեթի արտադրությունը բաժանվում ե զանազան մասնակի գործողությունների, վորոնցից յուրաքանչյուրը բաժին ե ընկնում բացառապես մի մասնագետ բանվորի: Յեվ այդ գործողությունների գումարը կամ ամբողջ գործը կատարվում ե նման մասնագետ բանվորների ամբողջական աշխատանքով կամ դառնում ե նրանց ընդհանուր աշխատանքի արդյունքը: Ճիշտ այդպես ել մահուցի մանուֆակտուրան և մի շարք այլ մանուֆակտուրաներ առաջ են յեկել տարբեր արհեստների համակցումով, միևնույն կապիտալի կառավարության ներքո:

**Յերեկորդ դեպք:** Սակայն մանուֆակտուրան առաջանում է նաև հակադիր ճանապարհով: Միևնույն կամ միատեսակ աշխատանք կատարող՝ որինակ՝ թուղթ, տառեր (շրիփտ) կամ ասեղ շինող բանվորներին միացնում ե կապիտալը միևնույն արհեստանոցում: Դա կոռպերացիա յե իր ամենապարզ ձևով: Այդ արհեստավորներից յուրաքանչյուրը (գուցե մի կամ յերկու քարտիանով (վարպետա-

ցու) պատրաստում ե ամբողջ ապրանքը, այսինքն կատարում ե այն բոլոր հաջորդական գործողությունները, վորանհրաժեշտ ե այդ ապրանքը պատրաստելու համար: Նրա աշխատանքը պահում ե իր հին արհեստավին տիպարը:

Սակայն արտաքին հանգամանքներն ստիպում են շուտով այլ կերպ ոգտագործել բանվորների մի շենքում կենտրոնացումը և աշխատանքի միաժամանակ կատարումը: Այսպես, որինակ, միջոցներ են ձեռք առնվում, վոր տվյալ ժամանակամիջոցում ավելի մեծ քանակությամբ ապրանք պատրաստվի: Դրա համար ել աշխատանքը բաժանվում ե: Փոխանակ միևնույն արհեստավորին հանձնարելու գանազան գործողությունների հաջորդական կատարումը՝ այդ գործողությունները զատում են իրարից, առանձնացնում, դասավորում մեկը մյուսի կողքին և ամեն մի գործողություն հանձնարարում առանձին արհեստավորի: Այսպես վոր այդ գործողությունները բոլորը միասին և միաժամանակ կատարվում են գործավորների համագործակցությամբ: Աշխատանքի այդ պատահական բաժանումը կրկնվում ե՝ ցուցադրելով իր առավելությունները և հետզհետե ամրանում իրեն աշխատանքի բաժանման յեղանակ:

**Մաճութակուրայի յերկու ձեւ:** Փակտուրաները բաժանվում են յերկու վերք:

**Վերք:** հիմնական ձևի: Յերբեմն ել այդ յերկու ձերը պատահում են խառն ձեռվ ներկայացնելով, սակայն, յերկու երապես տարբեր տեսակ: Յեվ հետագայում, յերբ մանուֆակտուրան վեր ե ածվում խոշոր մեքենային արդյունաբերության, այդ յերկու ձերը կատարում են վոչ ըոլորովին միատեսակ դեր: Մանուֆակտուրայի այդ կրկնակի բնույթը վորոշվում ե հենց արգասիքի բնույթով: Վերջինս ստացվում ե կամ ինքնուրուցն մասնակի արգասիքները զուտ մեքենական ձեռվ իրար միացնելով, կամ միմյանց հետ կապված մի շարք հաջորդական պրոցեսսների և գործողությունների հետևանքով:

Այսպես, որինակ, շոգեշարժը բաղկացած  
է ավելի քան 5000 ինքնուրուցն մասերից:  
Սակայն նա չի կարող հատկապես առաջին  
տեսակի մանուֆակտուրայի որինակ ծա-  
ռայել քանի վոր խոշոր արդյունաբերության արդասիք եւ  
Գեղեցիկ որինակ ե ներկայանում ժամացուցը, վոր զեր  
Վիլյամ Պետափին ոգտագործել ե ցուցադրելու մանուֆակ-  
տուրայի բնորոշ աշխատանքի բաժանումը: Նյուրնբերգի ար-  
հետավորի անհատական արդասիքից ժամացուցը դարձել  
ե մասնակի բանվորների մասսայական հասարակական ար-  
դասիք: Այսպես՝ ժամացուցը պատրաստող բանվորներից  
մեկը զսպանակներ ե շինում, մյուսը՝ թվացուցներ, յեր-  
բարդը սուտակներն ե ամրացնում, չորրորդը ոլաքներ ե  
շինում, հինգերորդը ժամացուցի տուփեր ե պատրաստում,  
մի ուրիշը պատրակներ կտրում, մեկը վոսկեզօծում և  
այլն: Դրանց աշխատանքն իր հերթին ելի բաժանվում  
ե միքանի մասի. որինակ՝ անիմսեր շինող բանվորներից  
մեկը արուրի անիմսեր ե շինում, մյուսը՝ պողպատե,  
յերրորդն այդ անիմսերն ամրացնում ե մեխանիզմի հար-  
կավոր տեղերում. հղկում մասերը և այլն, մի ուրիշը մե-  
խանիզմի մեջ ե տեղափորում գանագան անիմսեր և զսպա-  
նակներ, մեկն ել անիմսերի ատամներ ե շինում, նրանց  
միջի բացվածքները լայնացնում հարկավոր չափով, ամ-  
րացնում մեխանիզմի մեջ դրված մասերը: Այս ճյուղն ել  
միքանի դեպքերում իր լենթաբաժանումներն ունի. այս-  
պես՝ մեկն անիմսի գլաններն ե շինում, մյուսը՝ հանդիպա-  
կաց անիմսերը, յերրորդը՝ ճոճանակը, չորրորդը՝ մեխանիզ-  
մը. մեկը ժամացուցն ե կարգի գցում, մյուսը պողպատը  
հղկում, մի ուրիշն անիմսերն ե հղկում, մեկն ել պատ-  
տակներն ե հղկում, մեկը թվանշանները նկարում, մի  
ուրիշը պղինձն եմալով պատում, մեկն ել ժամացուցի  
տուփին ողակ ե շինում, մեկն ել արուրի նշանագրերը  
ժամացուցի մեջտեղը զետեղում, մեկը ժամացուցի տուփը

բանալու համար զսպանակ դնում, մի ուրիշը տուփը քանչ-  
դակում, մեկն ել հղկում և այն և ալին, վերջապես մեկն  
ել պատրաստի ժամացուցները վերջնականապես ժողովում  
և բանեցնում:

Ժամացուցի միայն միքանի մասերն են անցնում զանազան ձեռքերով և վերջիվերջո այդ զատ զատ մասերը հավաքվում են մի ձեռքում, վոր միացնում ե նրանց և կազմում մի մեքենական ամբողջություն։ Ծնորհիվ պատրաստի արգասիքի (ժամացուցի) իր բաղկացուցիչ մասերի հետ ունեցած զուտ արտաքին հարաբերության՝ տվյալ արտադրության մեջ, ինչպես և նման այլ արտադրություններում, բազմաթիվ մասնակի բանվորների միացումը մի արհեստանոցում միայն պատահական է։ Մասնակի աշխատանքներն իրենց հերթին կարող են կատարվել առանձին ինքնուրույն բանվորների ձեռքով։ այդպես և Վասդան և Նյուշատել կանտոններում, մինչդեռ Ժընևում գոյություն ունեն ժամացուցի խոշոր մանուֆակտուրաներ, այսինքն՝ մասնակի բանվորների անմիջական կոռպեքտացիա մի կապիտալիսափի կառավարության ներքո։ Սակայն այս վերջին գեպքում ևս թվացուցները, զսպանակներն ու տուփերը շատ քիչ գեպքում են պատրաստվում մանուֆակտուրայում։ Համակցված մանուֆակտուրանին լեզանակը շահավետ ե այստեղ բացառիկ գեպքերում միայն, քանի վոր մրցակցությունը տանն աշխատող բանվորների միջն շատ մեծ է, իսկ արտադրության տրոհումը բազմաթիվ այլազան պլոցեսոնների՝ համարյա թե վերացնում ե աշխատանքի գործիքների միատեղ գործադրության ննարավորությունը։ Մինչդեռ տան աշխատանքի գեպքում կապիտալիստն աղատվում է գործարանի շենքի և այլ ծախքերից, Պետք ե նկատել մի հանգամանք՝ այն բանվորների գրությունը, վարոնք աշխատում են իրենց տանը, բայց վոր իրենց, այլ կապիտալիստի (գործարանատիրոջ, ձեռնարկատիրոջ) համար, միանգամայն տարբեր ե այն ինքնուրույն արհետ

տավորի դրությունից, վորն աշխատում ե միայն իր հաճախորդների համար:

**Սաեղի մանուշակտուրայի մյուս տեսակը, նրա ժակտուրա—յեր-** կատարյալ ձեր, արտադրում ե այնպիսի կրորգ ձեզ. արգասիքներ, վորոնք անցնում են զարգացման կապակցյալ մոմենտներ՝ պրոցեսների հաջորդական շարքով։ Այդպես ե, որինակ, ասեղի մանուֆակտուրան, ուր մետաղի լարն անցնում ե 72, նույնիսկ 92 մասնակի բանվորների ձեռքով։

Վոր չափով այդպիսի մանուֆակտուրան համակցում ե նախապես անջատ արհեստները, նույն չափով նա կարծում ե արգասիքի արտադրության առանձին մոմենտների միջև յեղած տարածությունը։ Դրա հետ միասին կրծատվում ե այն ժամանակը, վորը անհրաժեշտ ե արգասիքի մի շրջանից մյուսն անցնելու համար, հետեւապես կրծատում ե նաև այդ անցումների վրա գործադրած աշխատանքը։ Այս ճանապարհով աշխատանքն ավելի արդյունավետ ելնում արհեստի հետ համեմատած, և այդ դեպքում արդյունավետության աճումը բղխում ե մանուֆակտուրայի կոռպերատիվ բնութից ընդհանրապես։ Մյուս կողմից մանուֆակտուրային հատուկ աշխատանքի բաժանման սկզբունքն առաջ ե բերում արտադրության առանձին մոմենտների անջատումն, վորոնք առանձնացվում են իբրև համապատասխան թվով արհեստային բնութի ինքնուրույն մասնակի աշխատանքներ։

**Տերի մանուշակտուրա:** յուրաքանչյուր առանձին խումբ, այսինքն՝ բանվորների վորոշ թիվ, բաղկացած ե միատեսակ տարրերից և կազմում ե միամնական մեխանիզմի մի առանձին որգանը։ Սական միքանի մանուֆակտուրաներում յուրաքանչյուր առանձին խումբ արդեն իսկ մի առանձին բանվորական մարմին ե, մինչդեռ միամնական մեխանիզմ-

մը կազմվում ե այդ տարրական արտադրական որգանիզմների կրկնության և բազմապատկման միջոցով։

Վերցնենք որինակ շշերի մանուֆակտուրան—նա բաժանվում ե յերեք՝ մեկը մյուսից ելապես տարբեր շրջանների։ Առաջին՝ նախապատրաստական շրջան, յերբ ավազից, կրից և այն խառնուրդ են պատրաստում, վորից ստացվում ե ապակի։ Այդ խառնուրդը հալում և հեղուկ ապակյա զանգված են պատրաստում։ Այդ առաջին, ինչպես և վերջին շրջանում, յերբ շշերը հանում են վառարանից, տեսակավորում, տեղափորում և այն, գրաղված են զանազան մասնակի բանվորներ։ Այդ յերկու շրջանի միջոցում ե գտնվում շշերի արտադրությունը, բառի իսկական խմաստով, այսինքն հեղուկ ապակյա զանգվածից շշեր պատրաստելը։ Միևնույն վառարանի դռան առջև աշխատում ե մի ամբողջ խումբ, վոր Անգլիայում կոչվում ե «գիրա»։ Այդ խումբը բաղկացած ե հինգ հոգուց։—մեկը շշի մշակումն ե ավարտում, մեկը փչում, ուղցնում ե ապակին, մեկը տեղափորում, մեկն ել ընդունում։ Այդ հինգ մասնակի բանվորները կազմում են հինգ առանձին որգանները բանվորական միամնական մարմին, վորը գործել կարող ե միայն իբրև ամբողջություն, այսինքն՝ միայն վորպես հինգ հոգու անմիջական կոռպերացիա։ Յեթե պակաս ե նրա հինգ բաղկացուցիչ մասերից մեկը, նշանակում ե անդամալուծված ե ամբողջ մարմինը։ Բայց միենույն հալիչ վառարանը միքանի դռւու ունի— Անգլիայում, որինակ, 4—6 գուռ, —ամեն մի դռան մոտ կա կավի հալոց՝ ապակյա հեղուկով, և ամեն մի հալոցի մոտ զբաղված ե հենց նույն այդ հինգ մասնագետ բանվորների մի խումբ։ Յուրաքանչյուր առանձին խմբի մասերի տրոհումը հիմնված ե անմիջապես աշխատանքի բաժանման վրա, մինչդեռ զանազան միատեսակ խմբերի միությունը ներկայացնում ե պարզ կոռպերացիա այն նպատակով, վորպեսզի ավելի

\* Հինգերորդը բնազրում չի հշատակված։

մեծ խնայողությամբ կարելի լինի ոգտագործել արտադրության միջոցներից մեկը, տվյալ դեպքում հարիչ վառարանը: Ամեն մի արդպիսի վառարան իր 4-6 դռներով կազմում ե իրեկ ապակու մշակման մի խնդնուրույն արհեստանոց, և ապակու մանուֆակտուրան ընդգրկում ե միքանի արդպիսի արհեստանոց իր հարմարություններով և բանվորներով՝ արտադրության սկզբնական և ավարտական շրջանների համար:

**Մանուֆակտուրանոցի առաջապես, մանուֆակտուրան ինը ըստ առների եամակում:**

Նազան արհեստաների համակցումից՝ կարող ե իր հերթին գառնալ զանազան մանուֆակտուրաների համակցումն: Այսպես, որինակ, ապակու մշակման խոշոր ձեռնարկություններն Անգլիայում իրենք են պատրաստում իրենց համար կավե հալոցներ, քանի փոքր այդ վերջինների սարքելուց ե կախված ելապես արգասիքի վորակը:

Արտադրության վորոշ գործիքի մանուֆակտուրան կապված ե այսաեղ արգասիքի մանուֆակտուրայի հետ: Յեկ ընդհակառակը՝ վորոշ արգասիքի մանուֆակտուրան կարող ե կապված ինել այնպիսի մանուֆակտուրաների հետ, փորձնց համար այդ տվյալ արգասիքն ինքը ծառայում ե վորակու հում նյութ կամ հետագալում միանում ե այդ մանուֆակտուրաների արգասիքների հետ: Որինակ՝ Փինստոլասի (արճիճ պարունակող ապակի) մանուֆակտուրան միանում ե յերբեմն ապակի հղող մանուֆակտուրայի և արուրածուցլ մանուֆակտուրայի հետ: Վերջինս մետաղյա շրջանակներ ե պատրաստում զանազան ապակե իրերի համար: Այս դեպքում համակցված մանուֆակտուրաները կազմում են մի միասնական մանուֆակտուրայի ըստ տարածության շատ կամ քիչ առանձնացած բաժիններ և միևնույն ժամանակ միմյանցից անկախ արտադրության պրոցեսներ, գուրաքամչյուրն իր հատուկ աշխատանքի բաժանմամբ: Չնայած համակցված մանուֆակտուրայի զա-

նազան առավելություններին՝ նա, իբրև արդպիսին, չեհասնում իսկական տեխնիկական միության: Այդ միությունն առաջ ե գալիս միայն մանուֆակտուրայի մեքենական արտադրության դեպքում:

Համ Կ. ՄԱՐՔՍԻ  
(«Կապիտալ», համար 1)

## ԳԵՂԱՍԵՂԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ.

Վորպեսզի շոշափելի կերպով պատկերացնենք, թե ինչ ազգեցություն ունի աշխատանքի բաժանումը ժողովրդական արդյունաբերության ընդհանուր դրության վրա, լավ կլինի ուշադրության առնենք, թե ինչ հետևանքներե ունենում այդ բաժանման կիրառումը վորևե առանձին արտադրության մեջ: Վերցնենք որինակ մի աննշան արտադրություն, ուր, սակայն, աշխատանքի բաժանումը շատ նկատելի յեւ—այսինքն գնդասեղի արտադրությունը:

Այն բանվորը, վոր գեռ հմտություն չի ճեռք բերել այդ գործում, վորն աշխատանքի բաժանման հետևանքով մի առանձին արհեստ ե դարձել, և չի վարժվել այդտեղ գործադրվող գործիքներին, վորոնք առաջ են յեկել հավանութեն նույն այդ աշխատանքի բաժանման շնորհիվ, չի կարող ամբողջ բանվորական որվա ընթացքում պատրաստել մի գնդասեղ, ուր մնաց, իհարկե, քսանը:

Բայց այդ արտադրությունն իր ներկա (XVIII դար) կազմակերպությամբ վոչ միայն առանձին արհեստ ե իր ամբողջության մեջ, այլև բաժանման միքանի ճյուղերի, վորոնց մեծ մասն իրենց հերթին ներկայացնում են առանձին մասնագիտական զբաղմունք: Բանվորներից մեկը մետաղից լար ե քաշում, մլուսը ծգում, ուղղում ե այն, յերրորդը մասերի յեւ կտրառում, չորրորդը ծալըն ե սրում, հինգերորդը հղում ե մլուս ծալըր, վորի վրա պետք ե-

անցկացնեն ասղագնդիկը։ Ասղագնդիկի շինելը հենց պահանջում է յերկու կամ յերեք առանձին գործողություն։ մեկը պետք է ամրացնի այդ գնդիկն ասեղի ծալրին, մի ուրիշը հղկի, վողորկի, իսկ մի յերրորդը պետք է գնդա-սեղներն անցկացնի թղթի վրա, վոր բոլորովին առանձին զբաղմունք ե։

Այսպիսով գնդասեղ շինելու կարևոր աշխատանքը տրոհվում է մոտավորապես 18 զատ-զատ գործողությունների, վորոնցից յուրաքանչյուրը միքանի ձեռնարկներում կատարվում է առանձին-առանձին բանվորների ձեռքով, իսկ միքանի ձեռնարկներում ել միևնույն բանվորը միանգամից յերկու կամ յերեք գործողություն է կատարում։ Յես տեսել եմ մի այդպիսի փոքրիկ մանուֆակտուրա, ուր աշխատում ելին միայն 10 բանվոր. և դրա համար ել նրանցից միքանիսը հաջորդաբար յերկուական կամ յերեքական գործողություն ելին կատարում։ Թեև այդ գործարանը շատ աղքատ երև և դրա համար ել քիչ մեքենաներու գործիքներ ուներ, այնուամենայնիվ հենց այդ 10 բանվորը, յեթե յեռանդով ելին գործի կպչում, կարողանում ելին որական մոտ 12 ֆունտ գնդասեղ շինել։ Յեզ քանի վոր միջին մեծության ավելի քան 4000 գնդասեղը մի ֆունտ է գալիս, նշանակում ե, վոր այդ 10 բանվորը կարողանում ելին որական 48.000 գնդասեղ շինել, ուրեմն ամեն մի բանվոր շինում եր որական 4.800 գնդասեղ։ Իսկ յեթե այդ բանվորներն աշխատելին զատ-զատ, ամեն մեկն իր համար, մեկը մյուսից անկախ, նրանցից և վոչ մեկն, իհարկե, չեր կարողանա նույնիսկ 20 հատ, դուցե և մի հատ գնդասեղ շինել ամբողջ բանվորական որվա ընթացքում։ Ուրիշ խոսքով՝ նրանք չելին կարողանա շինել  $\frac{1}{240}$ , նույնիսկ  $\frac{1}{4800}$  մասն այն գործի, վոր կարողանում ելին շինել այժմ՝ շնորհիվ տարբեր գործողությունների նպատակահարձար բաշխման և միացման։

Իսկ մեքենային աշխատանքի դեպքում 10 բանվորը կարող են որական 7.000.000 գնդասեղ շինել։  
Համ ԱԴԱՄ ՍՄԻՏԻ\*

## ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԱՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ.

Բրդեղենի մանուֆակտուրայի գլխավոր հրգեղենի մանուֆակտուրայի կենտրոններն Անգլիայի արևմտյան մասներուն են՝ Բրեդֆորդ Վիլտ-Ռեգի մասնաւում։ Բրդեղենի մանուֆակտուրա սում հետեւալներն ելին՝ Բրեդֆորդ Վիլտ-Ռեգի մասնաւում։ Դեպարտամենտը կատարում է այս ամենաբարակ մասնաւում։ Դեպարտամենտը վոր հայտնի յերեքես, վոր հայտնի յերեք նուրբ պատառով (սարժա). Տրոուբրիչ Ստրոութ՝ գունավոր մանուղների արտադրության կենտրոնը. Տառնատոն, վոր Դեֆորի (Մորբինգոն Կրուզովի հեղինակը) որոք 1100 դաշտական (ստանոկ) ուներ։ Այդ շրջանը տարածվում եր Սիդնեյից հյուստերից, հյուսիսում, մինչև Շերբորն՝ հարավում, Ուփանելից, արևելքում, մինչև Բրիստոլ՝ արևմուտքում, ունենալով մոտ 50 մղոն յերկարություն ամենայերկար տեղում և 20 մղոն լայնություն՝ ամենանեղ տեղում։ Դեֆորի ասելով՝ դա մի «հարուստ շրջան եր, բազմաքանակ գետերով» ու քաղաքներով, բազմաթիվ ազգաքնակությամբ. այնպես վոր միքանի առևտրական ավաններ իրենց մեծությամբ կարող ելին մրցել քաղաքների հետ, իսկ իրենց բնակչության թվով նույնիսկ գերազանցում ելին նըանց»։ Այդ շրջանը «արդյունաբերության հրաշքն» եր, իսկ նրա արտադրած «սպանական նուրբ մահուղը» հագնում ելին «Անգլիայի բոլոր նշանավոր մարդիկ»։ Անկասկած այդ շրջանը բոլորին ել գրավում եր իր գետերի հարստությամբ և կոտսվոլցան բրդով։ Բրդեղենի մանուֆակտուրայի մի ճյուղը ձգվում եր ճիշտ մինչև Դեսոն, ուր առևտրական ները գնում ելին պաստառ (սարժա), վոր արտադրվում

\* Անգլիական նշանավոր տնտեսագետ XVIII դարում։

Քը շրջակա գյուղերում, և ներկելով ու մշակելով՝ արտահանում ելին կամ վաճառում ներքին շուկայում աեղական սպառողներին:

Բրդեղենի մանուֆակտուրայի յերրորդ գլխավոր շըջանը  
Վեստ-Ռայզինգն եր Ցորկշիրում, ուր շալեղեն գործվածք-  
ների արտադրությունը կցնարոնացած եր Գալիֆակսի  
շուրջը, վորը Կեմդենի ասելով մանուֆակտուրայով սկսեց  
պարագել մոտ 1537 թվին, և ուր Լիդսն իր շըջակացը գովածիտ մահուդ եր մշակում անգլիական բրդից: 1574 թվին  
Վեստ-Ռայզինգի մանուֆակտուրիստները 56.000 կտոր  
յերկու լենքի (կրկնակի լախության) և 72.000 կտոր սո-  
վորական մի լենքի մահուդ ելին մշակել: Այս համառոտ  
հայացքից յերեւում ե, վոր ինչքան ել ուժեղ կերպով փոխ-  
ված չինի իր չափերով այդ բոլոր շըջանների արտադրու-  
թյունը 1760 թվից այս կողմ, անուամենայնիվ բրդեղենի  
արդյունաբերության զանազան ճյուղեր նույնիսկ այժմ տե-  
ղափորված են համարյա նույն վայրերում, ինչ վոր այն  
ժամանակ: Վեստ-Ռայզինգը մնում է վորպես նուրբ շա-  
լեղեն գործվածքների և կոպիտ մահուդի արտադրության  
վայր, Նորվիչը՝ կրեպի արտադրության, իսկ արևմուտքը  
մշակում է բարակ մահուդ:

Մետաղագործականի արդյունաբերությունից հետո կազմակերպության տեսակառարարական աշխատից բռնում է մետաղագործական արտադրությունը, վոր տեղի ուներ մեծ չափերով — թեև այդ ժամանակներն ուկան եր արդեն անկանությունը — Սեսսենսում, ուր 1740 թվին գործում ելին 10 վառարան, վորոնք տարեկան հարում ելին 18.400 տոնն մետաղ։ Այդ մասն արդյունաբերությունն իր զարգացման գաղաթնակետին հասավ XVII դարում, բայց 1724 թվին ել այդ իշխանության (Графство) մեջ դեռ գլխավոր արտադրությունն եր։ Լոնդոնի ու Պողոսի տաճարը շրջափակող վաճակապատճ ձուլված եր Լամբերգերաստում, նա, յոթ զարդ

պասի հետ միասին, կշռում եր ավելի քան 200 տոնն և  
արժեքը 11,000 ֆունտ-ստերլինգ։ Գլուխերչիթը, Շրոպզիրը և  
Յորկշիրն ունելին վեցական հալոցքի (դոմենի) վառարան։  
Այդ իշխանություններից վերջինում, վոր պարծենում եր  
1400 տոնն տարեկան արտադրությամբ, ամենանշանագործ  
գործարանները գտնվում ենին Ռոտերհեմում։ Յերկաթա-  
գործական մեծ գործարաններ կային նաև Նյուկեմուում։

1755 թվին հանքագործարանատեր Անտոնիչ Բեկոնը  
Մերախիր-Տիգիլում 8 մղոն յերկարությամբ և 5 մղոն լայ-  
նությամբ մի հողամաս վերցրեց կապալով, վորի վրա կա-  
ռուցեց յերկաթագործական գործարաններ և ածխահանքեր  
(շախտաներ): 1709 թ. հիմնվեցին կոլբրուկդելյան գոր-  
ծարանները Շրոպշիրում, իսկ 1760 թ. Շոտլանդիայում  
առաջին անգամ արտադրվեց կարրոնյան յերկաթ: 1737  
թվին կար ընդամենը մոտ 59 հալոցքի վառարան 18 ալվար  
իշխանությունների մեջ, վորոնք տարեկան արտադրում  
ելին 17.350 տոնն: Միևնույն ժամանակ մենք, ինչպես  
ցուց են տալիս հաշիվները, ներմուծում ելինք 20,000  
տոնն: 1881 թվին մենք արտահանել ենք 3.820 315 տոնն  
յերկաթ և պողպատ, 27.590.900 ֆ.-ստ. արժողությամբ,  
իսկ ներմուծել՝ 3.705.332 ֆ.-ստերլինգով:

Բամբակեղենի արդյունաբերությունը  
մասնաւթակու- դեռ աննշան եր: Նա սահմանափակվում  
րա: Եր միայն կանկաշիրով, ուր սրա կենարուն-  
ներն ելին Մանչեստրը և Բոլտոնը: 1760 թվին այդ ար-  
դյունաբերության մեջ աշխատում ելին գոչ ավելի քան  
40.000 հոգի, և տարեկան արտադրությունը գնահատվում  
եր ընդամենը 600.000 ֆ.-ստ.: Արտահանությունը, սակայն,  
աճեց ուղիղ գծով: — 1701 թվին արտահանությունը հասավ  
**23.253 ֆ.-ստերլինգի, 1751 թ.-45.986 ֆ.-ստ., 1764 թ.-**  
**200.354 ֆ.-ստ.: Ազգ ժամանակի աղբյուրները վկայում  
են այն բազմազան և «գերազանց» մասնափակութաների  
մասին, վորոնք տարեցտարի ծնունդ ելին առնում և ըն-**

դարձակվում Մանչեստրի յեռանդուն, հնարամիտ և նախաձեռնող արդյունաբերողների շնորհիվ։ Սակայն նույնիսկ 1764 թվին մեր բամբակե գործվածքների արտահանությունը հասնում եր միայն բրդե գործվածքների արտահանության արժեքի  $\frac{1}{20}$ -ին։

**Մետաղյա իրերի արտադրությունն այն կուրյան մա- ժամանակ, ինչպես և հիմա, կենտրոնա- նութակուրա- ցած եր գլխավորապես Շեֆֆիլդում և Բիրմինհեմում։ Վերջինում 1727 թ. այդ ճյուղով զբաղվում եր ավելի քան 50.000 բանվոր։ Գործը, սակայն, այնքան ուժեղ կերպով կենտրոնացած չեր այն ժամանակ, ինչպես այժմս ե, այլ գործությունն ունելին մանր արհեստանոցներ՝ ցրված ամբողջ թագավորության մեջ։ Հղկած պողպանն, որինակ, արտադրվում եր Վուդստոկում, կողպեքները՝ հարավային Ստաֆֆորդշիրում, գնդասեղները՝ Վորրինգտոնում, Բրիստոլում և Գլոստերում, ուր նրանք «քաղաքի գլխավոր արդյունաբերությունն» ելին կազմում։**

**Գուլպայի ար- գուլպայի (Չուլկի) արտադրությունը տագրություն։ Նույնպես գտնվում եր դեռ կենտրոնաց- ման պրոցեսում։ Մոավորապես 1800 թվին մետաքսե գուլպաների արտադրությունը կենտրոնացած եր Դիերիում, բրդե գուլպաներինը՝ Լեյստերում։ Ինչ վերաբերում ե նոտաինհեմին, նա դեռ չեր նվաճել այն ժամանակ բամ- բակե գուլպաների արտադրությունն ամբողջովին։ Սակայն դարասկզբին դեռ շատ դազգայաներ կալին Լոնդոնի շրջա- կայքում և հարավային Անգլիայի այլ մասերում։ 1750 թվին Լոնդոնն ուներ 1000 դազգահան, Սերբը՝ 350, Նոտտին- հեմը՝ 1500, Լեյստերը՝ 1000, Դիերին՝ 200, մյուս կե- տերը կենտրոնական իշխանություններում՝ 7300, անգլիա- կան և շոտլանդական մյուս քաղաքները՝ 1850, Իրլան- դիան՝ 800, ընդամենը 14000 դազգահան։ Մետաքսի մեծ մասը գործվում եր Սպիտակիլդսում, Նախապես մանվե- լով հյուսիսում՝ Ստոկպորտում, Նետոփորդում, Կոնդլու-**

նում և Դերբիում։ 1770 թ. Շեֆֆիլդում կար մի մետաք- սագործարան, վոր կառուցված եր Դերբիի գործարանների որինակով, և մետաքսեղենի մի մանուֆակտուրա կենդա- լում։ Կովենտրին Դեֆոյի որոք արդեն գրավել եր ժապա- վենի արտադրությունը։ 1721 թ. հաշվում ելին, վոր մե- տաքսեղենի մանուֆակտուրան արտադրում եր տարեկան 700 000 ֆաստ. ավելի, քան հեղափոխության ժամանա- կաշրջանում։

**Քարանի ար- տագրություն։ Վեր գոյություն ուներ Անգլիայում, և XVII դարի սկզբին մտավ Դենդի։ 1746 թ. կազմվեց «Բրիտանական քաթանի ընկերությունը», Աֆրիկային և ամերիկան գաղութներին անգլիական քաթան մատակա- րարելու համար, և Ագամ Սմիտը լենթադրում եր, վոր այդ մանուֆակտուրան ապագա ունի։ Նա, իհարկե, Իս- լանդիայի գլխավոր մանուֆակտուրան եր և այնտեղ ստա- ցավ իր հետագա զարգացումը շնորհիվ XVIII դարավերջին այնտեղ գաղթած ֆրանսիական բողոքականների։**

**Տեխնիկան** Տեխնիկան դեռ շատ հետամնաց եր։  
**XVIII գարում։ Զնայած բրդեղենի արդյունաբերության նախապատիվ գրության՝ աշխատանքի բաժանումն այդտեղ XVIII դարում «մոտավորապես նույնն եր, ինչպես և մի դար առաջ. գործադրվող մեքենաների մեջ նույնպես մեծ զանազանություն չկար»։ Հստ Աղամ Սմիտի XV դարում միայն լերեք կարեռ գյուտ ե լեղել—ճախարակի (Ճահրա) և լիլկի փոխարինումն ինքնաշարժ ճախարակով, մեքենա- ների գործադրություն, վորոնք հեշտացնում են հենքի և լենքի թելերի պատրաստությունը նախ քան դադ- ցյանի վրա անցկացնելը, և մահուդ պատրաստելու գործի- քի (սուխովալ) կիրաւումը, վոր գործադրվում ե մահուդը խացնելու համար՝ մահուդը ջրի մեջ տրորելու փոխարեն։ Այս գյուտերը թվելիս նա մոռացել ե, սակայն, իշել ինք- նաշարժ մակույկը (մաքոք), վոր հնարել ե 1738 թ. Լան-**



կաշիրի Բյուրի քաղաքի բնակիչ կելը, և վորը մեծ գյուտերից առաջնն ե, վոր հեղաշրջումն առաջ բերեց բրդեղնի արդյունագործության մեջ։ Այդ մակուկի շահավետությունն այն ե, վոր նրա ոգնությամբ ջուրհակը կարող ե կրկնակի արագ աշխատել, և մի մարդը մենակ կարող ե գործել ամենալայն մահուղը, վորը առաջ պահանջում եր յերկու մարդու միատեղ աշխատանք։

«Բամբակեղենի արդյունաբերության մեջ գործադրվող մեքենաները մինչև 1760 թ. համարյա նույնչափ պարզ, նախնական ելին, վորչափ Հնդկաստանում, թեև մանագործական դազգյահն ավելի դիմացկուն եր և ավելի լավ կառուցվածք ուներ, իսկ բամբակ գգելու սանդերքն ընդորինակված եր բրդեղենի մանուֆակտուրայից։ Անգլիայում մշակվում ելին գեռ միայն բամբակ կոպիտ գործվածքներ, ինչպես բումագեց և դիմիտա, վորոնց պահանջը պետք ե միշտ ել սահմանափակ լիներ»։ 1738 թ. Զոն Ուայոլ հնարեց ձգվող գլանակների ոգնությամբ մանելը, վորը մնաց առանց գործադրության։ 1760 թ. Լանկաշիրի մանուֆակտուրիստներն սկսեցին գործադրել ինքնաշարժ մակուկը։ Միտկալի գաջելը հասավ արդեն մեծ չափերի։

Պատճառը, թե ինչու համար աշխատանքի բաժանումն այդպես թույլ եր կիրառվում, իսկ գուտերն այդպես քիչ ելին լինում, այն ել աչքաթող արվում, բացարում ե հենց ինքն Աղամ Սմիտը։ Աշխատանքի բաժանումն, ասում ե նա, սահմանափակվում ե սպառող շուկայի չափերով, իսկ անգլիական ապրանքների շուկան այդ ժամանակ դեռ շատ փոքր եր, գլխավորապես հաղորդակցության վատ ճանապարհների պատճառով։ Անուամենայնիվ Անգլիան, չնայած իր մանուֆակտուրայի զարգացման դանդաղության, համենայն դեպս ավելի արագ եր առաջադիմում ալդ տեսակետից, քան մյուս յերկրները։ Նրա առաջադիմության մի մեծ գաղտնիքը փոխադրական ջրային ճանապարհներն ելին, վորոնցով նա ոգտվում եր շնորհիվ իր

գետերի։ Յամաքի ճանապարհներն այն ժամանակները դեռ շատ վատ ելին։ Այդ առաջադիմության յերկրորդ պատճառն այն ներքին մաքսային արգելքների բացակայությունն եր, վոր գոյություն ունելին, որինակ, Ֆրանսիայում և Պրուսիայում մինչև Շտեյնի ժամանակները։

Արտուր Յունգի (XVIII դարու անգլիական ճանապարհորդ) գրվածքում բազմաթիվ վկայություններ կան ճանապարհների անտանելի լինելու մասին։ Կառքով Լոնդոնից մինչև Եղիներուրդ գնալու համար պահանջվում եր առնվազն մի շաբաթ։ Այդ «գժոխային ճանապարհին» Պրեստոնի և Վիգանի միջև փոսեր կային չորս վոտնաչափ խորությամբ, և Յունգի աչքի առաջ մի մղոն տարածության վրա յերեք սայլ կոտրվեց։ Վորքինգտոնում մեծ ճանապարհը զզվեցնելու չափ վատ եր և ըստ յերեսութին «շինված եր շուտով խափանվելու մտադրությամբ»։ «Վերին աստիճանի վողորմելի», «զզվելի», «նողկալի»—ահա թե ինչ բառերով ե վորակում Յունգն այդ ճանապարհները։ Սակայն հաղորդակցության ջրային ճանապարհները մեծ չափով լրացնում ելին ցամաքային ճանապարհների պակասը։

Ջրային ճանապարհների բարելավման փորձերն սկըսվեցին գետերի հուների խորացնելու միջոցով։ 1635 թ. նախագծվեց Եվոնը դարձնել նավարկելի՝ սկսած նրա Հյուսիսայինի հետ խառնվելուց Տյուկաբերիի մոտ, Գլուտերշերի, Վուստերշերի և Ուորիկշերի ամբողջ տարածության վրա։ Սակայն նախագիծը մնաց անիրագործելի քաղաքացիական կովի պատճառով։ 1660 թվից մինչև 1755 թիվը մի շաբաթ կառավարական վորոշումներ յեղան գետերի հուները խորացնելու մասին։ 1720 թ. վորոշում հրատարակվեց նավարկելի դարձնել Մերսելը և Իրվելլը՝ Լիվերպուլի և Մանչեստրի միջև։ Մոտավորապես նույն ժամանակները նավագնացություն հաստատվեց Երի և Կոլդերի վրա։ 1755 թ. շինվեց առաջին ջրանցքը Լիվերպու-

լի մոտ 11 մղոն յերկարությամբ։ Յերեք տարի հետո Քրիջուռաբերի իշխանը շինեց մի ուրիշ ջրանցք սկսած իր քարածխի հանքերից Վորսլեյում մինչև Մանչեստր՝ 7 մղոն յերկարությամբ։ 1761—66 թիվը ավարտվեց մի ավելի մեծ ջրանցք՝ 29 մղոն յերկարությամբ, վոր սկսվելով Մանչեստրից՝ Չեստերի վրայով համառում եր մինչև Մերսիա՝ Լիվերպուլից վերև։ Այդ ժամանակից սկսած ջրանցքների սիստեմն սկսեց զարգանալ մեծ արագությամբ։

**Մանուֆակտուրակառական հաղանակություն** կապիտալիստների դասակարգը դեռ բայի կազմակերպությունը։ Նոր եր ծնունդ առնում է Մեր գործվածք-կերպությունը։ Ների մեծ մասն արտադրվում եր դեռ տնախաճորժական յեղանակով։ Մանուֆակտուրաները դեռ սակավ են կենտրոնացել քաղաքներում և դեռ մասսամբ միայն կտրվել հողագործությունից։ «Մանուֆակտուրիստ» բառը, տառացի մաքով, նշանակում եր իր տանն իր սեփական ձեռքերով աշխատող մարդ։ Այս յեղանակով եր, որինակ, կազմակերպված դարասկզբին Վեստ-Ռայլանդի համարյա ամբողջ մահուղի արդյունաբերությունը։

Այդ ժամանական արդյունաբերական կազմակերպության ելական բնորոշ գիծը բաղմաթիվ մանր մանուֆակտուրիստների գոյությունն եր, վորոնք միանգամայն անկախ են, ունելին սեփական կապիտալ և հող, քանի վոր իրենց արհեստին միացնում են վոչ մեծ ֆրիգուլտերյան։ \* ազարակների մշակությունը։ Դեփոն տվել ե նըանց կյանքի հետաքրքիր պատկերը։ «Գալիֆակսին մոտ հողը՝ ասում ե նա, —բաժանված եր փոքր շրջափակած մասերի, յուրաքանչյուրը 2-ից մինչև 6-7 ակր, քիչ դեպքերում դրանից մեծ։ Ամեն մի 3-4 այդպիսի հողամասն ուներ իրեն կից ագարակ։ Առանձին տները հազիվ թե իրարից այնքան հեռու լինելին, վոր մարդկացին ձայնը մեկից մյուսին չհասներ... Ամեն տան մեջ ել կար մի շրջանակ մահուղի

\* Ֆրիգուլտեր՝ մանր հողատեր Անգլիայում, հակառակ կոպիդուլերի՝ կապալառուի։

կամ շալոն (բրդե բարակ կտոր)։ Ամեն մի քիշ շատ մեծ տուն մի մանուֆակտուրա յեր... Յուրաքանչյուրը մահուրդագործ առնվազն մի ձի յե պահում, վորով գործած ապրանքը շուկա յե տանում։ Յուրաքանչյուրն ունի մի կամ յերկու կով, յերեմն ավելի՝ ընտանիքը կերակրելու համար։ Այսպիսով ամեն տան կից շրջափակած համարյա ամբողջ հողամասը գործի յե դրված։ Հացահատիկ ցանքում ե այնքան միան, վոր բավականացնի ընտանի թոշուններին... Տները լի յեն ուժեղ յերիտասարդներով՝ վորը ներկի ամանի մոտ ե, վորը մանագործարանի դազգյահի, վորը մահուրդն ե կոկում։ Կանաքը և յերեխաները բուրդ են գոյում կամ մահում։ Բոլորն աշխատում են՝ փոքրից մինչև մեծը... Վոչ մուրացկան և նկատվում, վոչ ել պարապ թրե յեկող»։

**Ս. ՐՈՒՍԵԱԲԵՐԵՎ-** Արտուր Յունգի որոք, սական, այս յե-  
կան կապիտա- ղանակը համատարած չեր։ Այս գրողը  
լիզմի սազմերը։ Շեֆֆիլդում հանդիպեց մետաքսի մա-  
նուֆակտուրայի, ուր աշխատում ելին 152 բանվոր, վորոնց  
շարքում նաև կանաքը ու յերեխաներ։ Դարվինգտոնում  
«մի մանուֆակտուրիստ հիսունից ավելի մանագործական  
դազգյահ ուներ»։ Բոյնառնում մի մանուֆակտուրայում  
աշխատում ելին 150 բանվոր։

Ճիշտ այդպես ել արևմտյան Անգլիայի մահուղի ար-  
տագրության մեջ արգեն նկատելի ելին կապիտալիստա-  
կան յեղանակի սաղմերը։ Հարուստ վաճառականը գործ  
եր տալիս աները շրջակա գլուղերում, և այդպիսով այդ  
բանվորները դառնում ելին նրա գործավորները և կորցը-  
նում իրենց անկախությունը։ Նոտախնհեմի գուլպայի ար-  
տագրության մեջ 1750 թ. կային 50 այսպես կոչված  
«putters out» (գործ բաժանող) մանուֆակտուրիստ, վորոնք  
աշխատեցնում ելին կողմանակի կերպով (աշխատանք բա-  
ժանելով) 1200 մանագործական դազգյահ։ Լեյստերի իշ-

խաճնութիւն մեջ նույն ձեռվ զբաղված ելին 1800 դադպահ։ Ստաֆորդշիրի և Վուստերշիրի մեխի արտադրության մեջ վաճառականները պահեստներ ունելին այդ շրջանի զանագան մասերում և մեխ վինողներին այնքան յերկաթ ելին տալիս մեխի համար, վոր մի ամբողջ շաբաթ բավականանում եր նրանց և նրանց ընտանիքներին։ Լանկաշիրում կարելի յէ քայլ առ քայլ հետեւ կապիտալիստական արտադրության աճմանը։ Ակզբում տեսնում ենք, վոր ջուլհակն, ինչպես Յորկշիրում, ձեռք ե բերում հենքը և լենքի թելերը, այսինքն նյութեղենը, մշակում-գործում ե իր սեփական տանը և ինքն ել շուկա հանում պատրաստի ապրանքը։ Հետզհետեւ նա դժվարանում ե մանվածք ձեռք բերել մանողներից։ այն ժամանակ Մանչեստրի վաճառականներն սկսում են տալ նրան վուշե հենք և բամբակ, և ջուրհակն ել սկսուն ե կախումն ունենալ նրանցից։ Վերջապես վաճառականն սկսում ե հավաքել մի քաղաքում 30—40 դադպահ։ Այդ կարգն ամենից ավելի յեր մոտենում կապիտալիստական յեղանակին խոշոր տեխնիկական գյուտերին նախորդող շրջանում։

Հաստ Ա. ՏՈՅՆԻՔԻ

### Հ Ա. Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ ենք հասկանում մանուֆակտուրա \* ասելով։
2. Ինչով ե տարբերվում մանուֆակտուրան արհեստից և տնայնագործությունից։
3. Վորոնք են մանուֆակտուրային յեղանակի առավելություններն արհեստի և տնայնագործության նկատմամբ։
4. Ի՞նչ առավելություն ունի արտադրության մեքենային յեղանակը մանուֆակտուրայից։ Ի՞նչ ենք հասկանում տեխնիկայի զարգացում ասելով։
5. Վհրաբեղ և ինչպես ծագեց ու զարգացավ մանուֆակտուրան։
6. Վորոնք են մանուֆակտուրայի 2 ձևերը և ինչով են տարբերվում միմյանցից։
7. Ի՞նչ ձևով ե կատարվում բանվորների շահագործումը մանուֆակտուրաներում։
8. Ի՞նչ մանուֆակտուրաներ են յեղել և ի՞նչ մանուֆակտուրաներ կան այժմ։
9. Ի՞նչ մանուֆակտուրաներ գոյություն ունեն այժմ Խոլհըրդային Միության մեջ։
10. Կան արդյոք մանուֆակտուրաներ Անգլիովկասում, մասնավորապես Հայաստանում։ յեթե կան—վհրաբեղ և ի՞նչ մանուֆակտուրաներ։
11. Ի՞նչ մտքով ե գործածում ժողովուրդը մանուֆակտուրա և մանուֆակտուրիստ բառերը։

\* Մանուֆակտուրա բարդ բառ և ծագել է լատիներեն «manus» (ձեռք) և «factus» (արված, գործ) բառերից։ Բառացի հայերեն նշանակում ե «ձեռագործ»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

*Ցերես*

Ս. Ելատաթի բաժանումն յեզ մանուֆակտուրա.—

ըստ Ա. Մարգարի

3—11

Մանուֆակտուրա	3
Ի՞նչպես և առաջանում մանուֆակտուրան—Ա. դեպք	3
Բ. դեպք	4
Մանուֆակտուրայի յերկու ձեերը	5
Առաջին ձե—Ժամացույցի մանուֆակտուրա	6
Յերկրորդ ձե—Ասեղի մանուֆակտուրա	8
Շշերի մանուֆակտուրա	8
Մանուֆակտուրաների համակցութիւն	10

Գեղասեղի մանուֆակտուրա.—ըստ Ս. Պամ Սմիթի 11—13

Մանուֆակտուրան Անգլիայում.—ըստ Ա. Տոյնբիի 13—22

Բրդեղենի մանուֆակտուրայի կենտրոններն Անգլիայում	13
Մետաղագործական մանուֆակտուրաներ	14
Բամբակեղենի մանուֆակտուրա	15
Մետաղի մշակման մանուֆակտուրա	16
Գուլպաների արտադրություն	16
Քաթանի արտադրություն	17
Տեխնիկան XVIII դարում	17
Մանուֆակտուրայի կազմակերպությունը	20
Արդյունաբերական կապիտալիզմի սաղմերը	21



28380